Գրիգոր Զոհրապ

Տարակույս

Տանթելներուդ փրփուրովը կը մտնես
Երերալով՝ նավու մը պես ալեհերձ,
Աչքերու մեջ ցանկություններ կը գըտնես,
Ու կը հրճվիս կնկան մը պես այլամերձ:

Մատուցումի մը պես կարծես կը ծփան
Կոհակավետ մարմնիդ բոլոր գիծերը,
Ծըփանքով մը օձագալար խոլական,
Եվ կը զմայլին ապշած տղան ու ծերը:

Ամեն այրերն հորձանքիդ մեջ կը դառնան,
Ու կը փոխվին խելոքներն ալ խենթերու,
Սուրբերն անգամ իսկույն վրադ աչք կը բառնան,
Հոսանքն ես դուն սարսուռներու, տենդերու:

Ըսե՛ շիտակ, թե որ սիրեցիր քիչ մը զիս,
Ո՞վ հասուն կին, որ խոնջենքը մարմնիդ մեջ
Տարիներուն դեմը կելլես, կընդվըզիս,
Ձյունածաղի՞կ արդյոք կամ հո՞ւր ես անշեջ:

1908